between the community of student youth of both countries. Students, as a special social strata, who creates the future of the society and the inclusive intellectual potential of the development process, are also not free from the effects of the phenomenon of alienation that hurt society as well as hinder its proportional development. Therefore, the study and discovery of roots and causes of alienation among the students is a vital necessity for Armenia and Iran and can contribute to the progress of the society.
Keywords. social alienation, students, moral principles, emotional connections

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՐԹԱ-ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿՈՂՊԵՐԱՏԻՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻ

Սյուզաննա Եղիազարյան
Խ. Աբովյանի անվ. Հայկական Պետական մանկավարժական համալսարանի Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դասախոս

Զբաղվածությունը, առհասարակ, անձի հասարակական օգտավետ գործունեության կազմակերպումն է[1], ինչն էլ անպայմանորեն ենթադրում է խորաթափանց հայացք գցելն այդ գործունեության որակը ապահովող սկզբունքների՝ ուսանողների կրթության մակարդակի և այդ գործընթացում նրանց կիրառած ջանքերը պիտանի ուղղվածությամբ նպատակաուղղելու վրա։

Կրթության համակարգն, առհասարակ, իրենից ներկայացնում է կրթական չափորոշիչների, կրթության հաջորդականությունն ապահովող կրթական ծրագրերի (հանրակրթական և մասնագիտական), ուսումնական հաստատությունների և կրթության կառավարման փոխկապակցված ամբողջություն։ Հիմնական մասնագիտական կրթական ծրագրերը լինում են նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական։ Արդեն իսկ այս համակարգի նկարագրությունից բխում է, որ զուտ բուհական մակարդակի ջանքերով կրթության բոլոր հիմնախնդիրների լուծումն անհնարին է, որովհետև դրանք մասամբ դուրս են բուհական համակարգից կամ

[1]Տե՛ս **Калина Н.М.**, Феномен трудовой занятости студентов в России: история и современность // Проблемы современной экономики, Евразийский международный научно-аналитический журнал. 2017, №2., С. 222

բուհերի իրավասությունից՝ այն առավել համընդգրկուն խնդիր է (այս առումով ուսանելի կարելի է համարել այն մոտեցումը, որ խնդիրները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ մշտական և ժամանակավոր[2]՝ ուշադրությունը առավելապես սևեռելով մշտական խնդիրների վրա, որոնցից էլ հենց հանդիսանում է մեր ուսումնասիրության առարկա հանդիսացող նյութը)։ Այս հանգամանքը հուշում է, որ բարձագույն կրթության բարեփոխումները պետք է զուգատեղվեն պետական համակարգային բարեփոխումներով։

Այս հարցը արդիական է, մասնավորապես Հայաստանի Հանրապետության համար, քանի որ, ըստ պաշտոնական վիճակագրության, համաձայն՝2014-2015թթ. ուսումնական տարում Հայաստանի պետական և մասնավոր բուհերի բակալավրիատի ուսանողների թիվը կազմել է 79 հազար 623։ Համեմատության համար նշենք, որ անցած՝2013-2014թթ. ուսումնական տարում բակալավրիատի ուսանողների թիվը եղել է 85 հազար 922։ Այսինքն՝ վերջին մեկ տարում ուսանողների թիվը նվազել է 6 հազար 299-ով։ Ակնհայտ է, որ այս փաստը պայմանավորված է վերջին տարիներին արձանագրված արտագաղթի մեծ տեմպերով։ [3] Փաստորեն, խնդիրը սերտորեն առնչվում է մի շարք ածանցյալ հանգամանքների հետ, որոնցից կարևորագույնները, ինչպես վերը նշեցինք, արտագաղթի մեծ տեմպերն են և, ենթադրաբար նաև, ուսման վարձին դրույքաչափերը մարելու անկարողությունը հասարակության որոշ զանգվածի համար։ Ուստի, հաշվի առնելով այս հանգամանքները, մեր դիտարկումն է, որ ի թիվս ՀՀ-ում ծառացած սոցիալ-տնտեսական բազմաթիվ խնդիրների, պետության կողմից առաջնահերթություն տրվի նաև ուսանողության թիվը ավելացնելու կամ գոնե եղածը պահպանելու հիմնահարցին, ինչի ուղղությամբ մեր առաջարկն է, որ կառավարությունն, ի դեմս կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարության, օգնության ձեռք մեկնի և ֆինանսական աջակցություն տրամադրի՝ ստեղծված իրավիճակից հնարավորինս անցնցում դուրս գալու համար։ Խնդիրն, ի դեպ, միայն նոր ուսումնական տարվան չէ, որ հատուկ է լինելու, այլ փոխանցվելու է մի տարուց մյուսին, որովհետեւ այս տարի

---

[2] Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս.,** Մանկավարժություն, «Մանկավարժ», 2005, էջ 10

[3] http://www.yerkir.am/news/view/85750.html

փոքրաքանակ ուսանողներ են լինելու առաջին կուրսում, մյուս տարի, փաստորեն, երկրորդում և այսպես շարունակ:[4]

Ինչ վերաբերում է ուսումնասիրվող խնդրի էությանը, ապա նախ նշենք, որ, ըստ հայտնի մանկավարժներ Վ. Ա. Սլաստյոնինի և Ի. Ֆ. Իսաևի, խնդիրը իմաստավորված այն իրավիճակն է, որի նպատակը իրականության իմացությունն ու վերափոխումն է[5], իսկ դրա լուծումն էլ կարևորվում է հետևյալ հանգամանքով՝ ուսանողների աշխատանքային զբաղվածությունը գործընթաց է, որի իրականացնում է հասարակական անհատի զարգացումը միաժամանակ և՛ սոցիալական, և՛ տնտեսական ասպեկտներում[6], ինչն էլ, կարող է ապահովել յուրաքանչյուր պետության հզորությունը վերոնշյալ շրջանակներում: Փաստ է, որ այս խնդիրը, որպես «լայն ընդգրկում ունեցող հասարակական երևույթ»[7], շուտափույթ լուծում է պահանջում, ուստի մեր կարծիքով անվիճելի է այս խնդրի արդիականությունը և ուսանողների համար մասնագիտական գործունեության առավել լայն ոլորտներ ստեղծելու անհրաժեշտությունը, որը, փաստորեն, ուղղակիորեն և անուղղա-կիորեն կնպաստի տվյալ պետության ամրակայունությանը: Կարևորե-լով այս ոլորտում առկա մի շարք հիմնախնդիրների դերն ու նշանակությունը՝ ռուս մանկավարժ Լ.Լ. Դոդոնը գտնում էր, որ այս խնդիրների լուծման ժամանակ պետք է գնահատական տալ կոնկրետ փաստին, բացահայտել ու մատնանշել լավագույն ելքի ուղիները, գտնել կոնկրետ խնդրի հետ առնչող լուծման առավել ճիշտ տարբերակը[8]:

Ներկա պատմահասարակական մեծ ժամանակահատվածի կտրվածքով հանրակրթությունը պետք է ապահովի անցում գիտելիքներից, տեղեկություններից ու դրանց կիրառման կարողություններից դեպի ընդունակությունները և մտածողության

---

[4] https://www.armtimes.com/hy/article/141921

[5] Տե՛ս **Сластенин В.А., Исаев И.Ф., Шиянов Е.Н.**, Педагогика: Учеб. пособие для студентов высш. пед. уч. зав., М.: Академия, 2002, с. 504-505.

[6] Տե՛ս **Канаева Л.П., Лапшова А.М.**, Стратегии трудовой самозанятости студентов // Вестник науки и образования, № 8(44) 2018. Том 1, Мордовский государственный университет имени Н.П. Огарева, Саранск, с. 103.

[7] **Ղուլումչյան Գ. Ե.,** Մանկավարժություն, Գիրք II, Եր., 2005, էջ 10:

[8] Տե՛ս **Додон Л.Л.**, Сборник задач и упражнений по педагогике, М.: УЧПЕДГИЗ, 1959, С. 9

համընդհանուր միջոցները[9]: Եվ քանի որ «հանրակրթությունը բխում է մարդու և քաղաքացու շահերից և ծառայում է անհատին ու ժողովրդին»[10], ուստի առավել է կարևորվում առկա հանրակրթական խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությունը: Անհերքելի է, որ ուսանողները կարիք ունեն տեղեկատվության և խորհրդատվության՝ իրենց ուսումնառությունը շարունակելու, մասնագիտական կարողությունները զարգացնելու, կարիերան պլանավորելու, ձեռնարկատիրական գործունեություն սկսելու կամ աշխատանք փնտրելու գործում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնագիտական կողմնորոշման ոլորտը լայն է ու բազմագործոն, ունի տնտեսական, սոցիալական, մշակութային, հոգեբանական բազմաշերտ կառուցվածք, ապա ուսանողների կոոպերատիվ գործունեության կազմակերպման մեջ պետք է ներգրավվեն պետական կառավարման տարբեր մարմիններ, սոցիալական գործընկերներ, քաղաքացիական հասարակության այլ օղակներ, ուստիև նման կառույցի կայացման հաջողությունը մեծապես պայմանավորված է լինելու այս հարաբերություններում ընդգրկված մարմինների ու կառույցների փոխհամաձայնեցված, փոխլրացնող, հստակ համակարգված աշխատանքով:

Ինչպես նշում է սոցիալական պատմաբան Հ. Պերկինը, «Տեղի է ունենում երրորդ մասնագիտական հեղափոխություն»[11], երբ բարձր մրցակցության պայմաններում առաջին պլան են գալիս «ազատ մասնագիտացում» և բարձր որակավորում ունեցող աշխատողները: Ուստի նախ հարկ է ուսումնասիրել ուսանողների աշխատանքային գործունեությանը միտված պրոցեսում առկա խնդիրները՝ արդյո՞ք իրենք՝ ուսանողները, աշխատելն անհրաժեշտություն են համարում, թե՝ ոչ, և, ըստ այդմ, ի՞նչ խոչընդոտներ են առկա այդ ճանապարհին, ապա անհրաժեշտ է հասկանալ, թե ի՞նչ են նրանք աշխատում, ինչի՞ են ունակ և կամ ի՞նչ կկամենային (այստեղ կարևոր հարց է, թե՝ ինչ կերպ

---

[9] Տե՛ս **Մկրտչյան Մ.,** Հանրակրթության կազմակերպման հիմնահարցերը, «Նորավանք» ԳԿՀ տեղեկագիր, թիվ 3, 2006, էջ 5:

[10] **Կարապետյան Հ.**, Քաղաքացիական դաստիարակության հացեցակարգացին հիմնավորումը ազգային կրթության համակարգում // «21-րդ ԴԱՐ», թիվ 3(13), 2006, էջ 175-176:

[11] **Авраамова Е. М., Верпаховская Ю. Б.**, Работодатели и выпускники вузов на рынке труда: взаимные ожидания // Социологические исследования, 2006, №4, С.37-46) http://demoscope.ru/weekly/2007/0291/analit01.php

կկամենային ուսանողները տնօրինել ոչ միայն իրենց աշխատանքային գործունեությունը, այլև, առհասարակ, իրենց ազատ ժամանակը): Մյուս կարևոր և հիմնական խնդիրն էլ այն է, թե որքանով են միմյանց շաղկապված ուսանողի կրթությունն ու դրան համատեղ նրա կատարած աշխատանքը կամ, այլ կերպ ասած, արդյո՞ք ուսանողն աշխատում է իր մասնագիտական ուղղվածությամբ, թե՝ ոչ: Եթե ուսմանն համատեղելի աշխատանքը համապատասխանում է ուսանողի մասնագիտությանը, ապա դա զբաղվածության միանգամայն գովելի իրացում է և՛ տվյալ ոլորտում աշխատանքային փորձի ձեռք բերման, և՛ տեսական ուսումը գործնական կիրառության շնորհիվ առավել դյուրըմբռնելի դարձնելու տեսանկյունից:

Այս առթիվ մեր կարծիքը համապատասխանում է Մ□ Ս□ Կորոտկովայի հայտնած այն համոզմանը, որ եթե աշխատանքային գործունեությունը զուգորդվի կրթական գործունեությանը, ապա այդ դեպքում կրթությունը կվերածվի կրթության՝ «ամբողջ կյանքի համար»[12]:

Ցավալի, բայց փաստ է, որ ներկայումս ուսանողների շրջանում աշխատանքային զբաղվածությունը ոչ մասնագիտական բնույթ է կրում[13]: Այն, որ մասնագիտությունների ու զբաղմունքների ոլորտը դարձել է առավել դինամիկ, բազմագործոն և դժվար կանխատեսելի, ինքնին խնդիր է առաջացնում՝ կապված անձանց (ուսանողների) մասնագիտական գործունեության հաջող կազմակերպման հետ: Սա կարող է հանգեցնել այնպիսի աղետալի հետևանքների, ինչպիսիք են, օրինակ, մեծ ծավալներ ունեցող գործազրկությունը, պահանջարկ ունեցող մասնագետների պակասը, առկա մասնագիտական տարրի թերզարգացվածությունը և այլն: Խնդրի լուծման լավագույն տարբերակը աշխատաշուկայի և կրթական համակարգի փոխադարձ կապի խթանումն է:

Հասարակական կառուցվածքը և կրթվածության մակարդակ-գործազրկություն համադրությունն ուսումնասիրելիս նկատվում է, որ գործազուրկների թվում մեծ տեսակարար կշիռ են կազմում

---

[12] **Короткова М. С.,** Социальный портрет работающего студента // Научные труды Московского гуманитарного университета, № 5, 2016 с. 50

[13] **Старцева Н.Н., Брюхова О.Ю.**, Трудовая занятость студентов как объект социологического исследования // Современные исследования социальных проблем (электронный научный журнал), Modern Research of Social Problems, № 8(64), 2016, с. 55

բարձրագույն կրթություն ունեցողները: Սա կարող է պայմանավորված լինել մի շարք հանգամանքներով.

- Կրթական ծառայությունների շուկան էականորեն հետ է մնում աշխատաշուկայի պահանջներից,
- Խորանում է աշխատուժի մասնագիտական կարգավիճակի և գործատուի պահանջարկի միջև անհամապատասխանությունը, գործատուի կողմից առաջարկվող ցածր վարձատրությունը,
- Գործատուի բարձր պահանջները՝ կապված մասնագետների փորձի և որակավորման մակարդակի հետ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի նորանկախ պետության պատանիների ու երիտասարդների կողմից մասնագիտության ու զբաղմունքի ընտրությունը կրել է հախուռն բնույթ, ապա անհրաժեշտ է կրթական ծրագրերով նախատեսել դասընթացներ, որոնք աշակերտներին կուղղորդեն դեպի աշխատաշուկա, նրանց կօժտեն կարիերայում հաջողություններ ունենալու համար անհրաժեշտ նախնական հմտություններով և այլն: Այս առումով խրախուսելի է համալսարաններին կից կարիերայի կենտրոնների ստեղծումը՝ արդի մեթոդատեխնոլոգիական զինվածության պայմաններին համապատասխան:

Ներկայումս, երիտասարդ մասնագետների նկատմամբ աշխատաշուկայի ներկայացրած պահանջներից ակնհայտ է դառնում, որ կրթական համակարգը բավական հետ է մնում գործատուների պահանջներից: Ակնառու է, որ աշխատաշուկայի ակտիվ քաղաքականության իրագործման արդյունավետությունը կգնահատվի նաև երիտասարդների գործազրկության և գործազրկության միջին մակարդակի միջև եղած տարբերության կրճատման տեսանկյունից[14]:

Այս առումով ուսանելի է քննության առնել միջազգային փորձը, նվաճումներն ու ձեռքբերումները, քանի որ այդ ուղղությամբ գործատուների կողմից ուսանողներին օպտիմալ աշխատանքային գործունեությամբ ապահովելու տասնյակ միջոցներ ու համակարգեր են ստեղծվում ողջ աշխարհում՝ Կանադայից մինչև Հնդկաստան ու Ամերիկա[15]: Օրինակ՝ Ֆրանսիայում մասնագիտական կողմնորոշման

---

[14] Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, էջ 74-75: http://www.gov.am/files/docs/1322.pdf

[15] **Catherine Skrzypinski**, Why Co-Op Programs Are a Win-Win for Students and Employers,

գործընթացները կարգավորվում են օրենքով: Մասնագիտական կողմնորոշումն իրականացվում է զրույցների ձևով յուրաքանչյուր ուսումնական հաստատությունում՝ այդ հաստատության ներկայացուցիչների, սովորողների և նրանց ծնողների մասնակցությամբ: Ինստիտուտներում (Fachhochschule) սովորել ցանկացողներն իրենց փաստաթղթերը միանգամից հանձնում են այդտեղ: Գերմանիայում կանոնավոր կերպով որոշվում է համալսարանների ռեյտինգը, որտեղ հաշվի են առնվում դասախոսական կազմի մասնագիտական պատրաստվածությունը, ինչպես նաև հետագայում աշխատանք գտնելու հնարավորությունը՝ ավարտելով այս կամ այն համալսարանը: Մասնագիտական կողմնորոշումը Գերմանիայի Դաշնությունում իրականացվում է հարցումների, թեստավորման և խորհրդատվությունների, ծնողական կազմակերպությունների հետ համատեղ անցկացվող միջոցառումների միջոցով: Իսկ ահա առանձնահատկությունն այն է, որ յուրաքանչյուր երեխա լրացնում է աշխատանքային օրագիրը, որտեղ ընդհանուր տեղեկատվություն է տրվում ընտանիքի, անձնական հետաքրքրությունների, մասնագիտական ձգտումների վերաբերյալ, իսկ հատուկ մասնագիտությունների տեղերի բաշխմամբ զբաղվում են ոչ թե բուհերը, այլ հատուկ գրասենյակ՝ «Zentralstelle für die Vergabe von Studienplätzen»: Միջին գնահատականից բացի, ZVS-ը հաշվի է առնում նաև սոցիալական և անձնական պատճառներ, օրինակ՝ հաշմանդամությունը, ընտանեկան դրությունը և այլն: Եթե միջին գնահատականը բավարար չէ, ապա դիմորդին հերթագրում են: Մի քանի կիսամյակ հետո նրան համալսարանում տեղ են հատկացնում: Կանադայում մասնագիտական կողմնորոշման գործընթացների հիմքում աշխատաշուկայի իրական պահանջարկն է՝ քանակական և որակական առումներով, իսկ մասնագիտական կողմնորոշման ինստիտուցիոնալ-կազմակերպական օղակները ողջ երկրի տարածքում սփռված մասնագիտական կողմնորոշման ծառայություններ մատուցող հատուկ մասնագիտացված կենտրոններն են: Իսկ ահա մասնագիտական կողմնորոշման հիմնական խնդիրը Մեծ Բրիտանիայում ոչ միայն սովորողներին մասնագիտության ընտրության հարցում աջակցելն է,

---

https://www.shrm.org/resourcesandtools/hr-topics/technology/pages/why-co-op-programs-are-a-win-win-for-students-and-employers.aspx

այլև սեփական կարողություններն ու հնարավորությունները աշխատաշուկայի ընթացիկ և հեռանկարային կարիքների ու պահանջմունքների համատեքստում գնահատել սովորեցնելը: Երկրում մեծ ուշադրություն է դարձվում մասնագիտության ընտրության հարցում սովորողների ինքնուրույնությունը բարձրացնելուն: Առանձնահատկություն է համարվում մասնագիտական կողմնորոշման կազմակերպումը երկխոսության միջոցով՝ օգտագործելով հոգեբանական տարբեր մեթոդներ: Կարևոր տեղ է հատկացված պրակտիկային, որի ընթացքում ձևավորվում են սոցիալական և աշխատանքային տարբեր իրավիճակներ՝

- աշխատանքային օրվա պլանավորում,
- աշխատանքային հարաբերություններում սեփական ոճի մշակում,
- վարքագիծ՝ աշխատանքը կորցնելիս,
- ընտանեկան և աշխատանքային կյանքի խելամիտ համակցում:

Ուսումնական գործընթացներում պրակտիկան արդյունավետորեն կազմակերպելու նպատակով կրթական հաստատություններում ստեղծվում են փոքր մոդելային արտադրամասեր, որոնք սովորողներին հնարավորություն են տալիս դրսևորել սեփական հետաքրքրությունները, նախասիրությունները, ինչպես նաև գործարար հմտություններ ձեռք բերել փոքր բիզնեսում, դրսևորելով նախաձեռնողականություն և պատասխանատվություն կյանքի ու աշխատանքի տարբեր իրավիճակներում՝ հենվել սեփական անձի վրա: Ճապոնիայում էլ, առհասարակ, կրթության հիմնական նպատակներից մեկը կրթություն ստացողին հետագա կարիերային նախապատրաստելն է և դրա հետագա առաջընթացի օբյեկտիվ հիմքերի ձևավորումը[16]:

Այսպիսով, ինչպես փաստում է միջազգային փորձը, հզոր և տնտեսապես կայացած պետություն ունենալու համար անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը, իսկ անձի մասնագիտության ընտրությանը զուգահեռ առաջնահերթություններ են համարվում ինքնուրույնության ձևավորումը, սեփական կարողությունների և հնարավորությունների գնահա-

[16] Տե՛ս Հայեցակարգ Հայաստանի Հանրապետության մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացման, Հավելված N 1, ՀՀ կառավարության 2012 թ. հոկտեմբերի 4-ի նիստի N 40 արձանագրային որոշման, էջ 3-4:

տումը աշխատաշուկայում, մրցունակության և ճկունության հետևողական ձգտումը: Մեր կարծիքով անհրաժեշտ է, ընդօրինակելով միջազգային փորձը, հատուկ մասնագիտությունների տեղերի բաշխումը թողնել ոչ թե բուհերին, այլ հատուկ այդ նպատակով ստեղծված գրասենյակներին: Անչափ կարևոր ենք համարում նաև, որ հաշվի առնվի նաև սոցիալական և անձնական պատճառները, օրինակ՝ հաշմանդամությունը, ընտանեկան դրությունը և այլն: Կարևոր տեղ է պետք տալ նաև պրակտիկային, որի ընթացքում ձևավորվում են սոցիալական և աշխատանքային տարբեր իրավիճակներ՝ աշխատանքային օրվա պլանավորում, աշխատանքային հարաբերություններում սեփական ոճի մշակում և այլն, ինչը հնարավորություն կտա գործարար հմտություններ ձեռք բերել փոքր բիզնեսում՝ դրսևորելով նախաձեռնողականություն և պատասխանատվություն ու կյանքի և աշխատանքի տարբեր իրավիճակներում հենվել սեփական անձի վրա:

Այս ամենի բնականոն իրականացումը անպայմանորեն կհանգեցնի այնպիսի հիմնախնդիրների լուծման, ինչպիսիք են՝

- մշտական փոփոխվող իրավիճակներում անձի՝ ինքնուրույն կողմնորոշվելու կարողությունների ձևավորում,
- անձին իր ողջ կյանքի ընթացքում տեղեկատվության, խորհրդատվության, ինչպես նաև անհրաժեշտ այլ հնարավորությունների շարունակական տրամադրում՝ մասնագիտության կամ զբաղմունքի ընտրության, կարիերայի պլանավորման հարցերում,
- մասնագիտական կողմնորոշման ենթակա անձի հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների, հակումների, հետաքրքրությունների և շարժառիթների բացահայտում,
- մասնագիտական կողմնորոշում իրականացնող կազմակերպություններին և մասնագետներին անհրաժեշտ մեթոդական ապահովում:

Մասնագիտական կողմնորոշման իրականացման հիմնական սկզբունքներից կարող ենք առանձնացնել հետևյալները՝

- մասնագիտական կողմնորոշման մատչելիության և կամավորության

ապահովում սոցիալական բոլոր խմբերի համար,

- մասնագիտական կողմնորոշման հարցերում ցանկացած տեսակի

խտրականության բացառում,

• կյանքի յուրաքանչյուր փուլի առանձնահատկություններից ելնելով՝

• մասնագիտական կողմնորոշման ապահովում,

• ուսման, կյանքի և աշխատանքի փոխադարձ կապի ապահովում,

• անձի հետաքրքրությունների և հնարավորությունների առաջնահերթություն

և մասնագիտական կողմնորոշման հումանիստական բնույթ,

• մասնագիտության գիտակցված ընտրություն,

• արդյունավետ զբաղվածության ապահովմանը միտված մասնագիտական կողմնորոշում:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ ուսումնական հաստատություններում ուսանողների կրթա-աշխատանքային կոոպերատիվ գործունեությունը, որպես հայ հասարակության մեջ առկա ժամանակակից մարտահրավերների հաղթահարման ուղի կանխորոշելու համար անհրաժեշտ է, որ մասնագիտական կողմնորոշման աշխատանքները կրեն շարունակական բնույթ և իրականացվեն կարիերայի կենտրոնների միջոցով, որոնք պետք է համալրված լինեն անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով, ունենան շահառուների հետ համապատասխան աշխատանքի մեթոդա-բանություն, կարիերայի ուղղորդման գծով վերապատրաստված մասնագետներ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Աշխատանքային շուկան մեծ պահանջ ունի հնարավորինս պրոֆեսիոնալ և պատրաստված ուսանողների: Անհրաժեշտ է զարգացնել մասնագիտական կրթության համակարգը, որն ուղղված կլինի առավել բարձր որակավորում ունեցող մասնագետների պրոֆեսիոնալ զարգացմանն ու պատրաստությանը՝ աշխատանքի շուկայում շրջանավարտների հնարավոր մրցակցությունն ապահովելու նպատակով: Այդ ամենը մոտիվացնելու հիմքում ընկած են աշխատող ուսանողների բազմապիսի խմբերի, ուսանողների զբաղվածության զարգացմանը միտված տենդենցների ուսումնասիրությունը և այլն:

Բանալի բառեր: *ուսանողության զբաղվածություն, բարձրագույն կրթություն, աշխատանք, ուսում, գործատու:*

ОБРАЗОВАТЕЛЬНО-ТРУДОВАЯ КООПЕРАТИВНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ СТУДЕНТОВ КАК ПУТЬ ПРЕОДОЛЕНИЯ СОВРЕМЕННЫХ ВЫЗОВОВ

Сюзанна Егиазарян
Преподаватель кафедры Социологии и социальной работы
Армянского государственного
Педагогического Университета им. Х.Абовяна

Рынок труда требует как можно больше профессиональных и подготовленных студентов. Необходимо развивать систему профессионального образования, которая будет направлена на профессиональное развитие и подготовку более высоко-квалифицированных специалистов с целью обеспечения возможной конкуренции выпускников на рынке труда. В основе мотивации всего этого лежит изучение различных групп работающих студентов, тенденций, направленных на развитие занятости студентов и т.д.
Ключевые слова:занятость студентов, высшее образование, работа, учеба, работодатель.

EDUCATIONAL AND LABOR COOPERATIVE ACTIVITY OF STUDENTS AS A WAY TO OVERCOME MODERN CHALLENGES

Susanna Yeghiazaryan
Lecturer at the Chair of Sociology and Social Work
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan

The labor market requires as many professional and trained students as possible. It is necessary to develop a system of professional education that will focus on professional development and training of more highly qualified specialists in order to ensure possible competition of graduates in the labor market. The motivation for all this is based on the study of various groups of working students, trends aimed at developing student employment, etc.
Keywords: student employment, higher education, work, study, employer